Հավելված
ՀՀ փոխվարչապետի 2020 թ.
հոկտեմբերի 10 -ի N 621 - Ա
որոշման

«ԱՐԵՎԱՅԻՆ ԿԱՅԱՆԻ ՏԵՂԱԴՐՈՒՄ»
ԾՐԱԳԻՐ

1.	Ծրագրի նպատակը	«Դիակոնիա» բարեգործական հիմնադրամին պատկանող ուսումնական մասնաշենքում 148.9 կՎտ հզորությամբ արևային ֆոտովոլտային կայանի տեղադրման արդյունքում էլեկտրաէներգիայի խնայողության ապահովում:
2.	Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Օրենքով սահմանված կարգով օգտվել Հայաստանի Հանրապետության հարկերի, տուրքերի և պարտադիր վճարների գծով արտոնություններից:
3.	Բարեգործը	Շվեյցարիայի «Դիակոնիա» միջազգային հիմնադրամ (Շվեյցարիա, Բայնվիլ ամ Զեե, Ֆելդշտրասսե9) Գերմանիայի «ԱՄՐՈ» կազմակերպություն (Գերմանիայի Դաշնություն, Հերիշրիդ79737, Սալփեթերերվեգ 22) Գերմանիայի «Քրիստլիխեր Հիլֆսբունդ ֆյուր Օրիենթ» հասարակական կազմակեր-պություն (Գերմանիայի Դաշնություն, Բադ Հոբերգ61350, Ֆրիդբերգերշտրասսե 101) Հոլանդիայի «Մենսենկինդերեն» բարեգործական կազմակերպություն (Հոլանդիա, Նունսպեեթ 8071, Սպորլաան 1ա) Հոլանդիայի «Սոլիդ Ռոուդ» բարեգործական հիմնադրամ (Հոլանդիա, Նիյմեգեն6511, Այլբրախշտրատ8) Անհատ քաղաքացիներ
4.	Ծրագրի կատարողը	«Դիակոնիա» բարեգործական հիմնադրամ (ՀՀ ք. Երևան, Աշտարակի խճուղի, Հույսի Ավան թաղամաս)
5.	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	ՀՀ ք. Երևան, Աշտարակի խճուղի, Հույսի Ավան թաղամաս՝ էներգետիկ բնագավառ

6.	Ծրագրի բյուջեն	32 133 333 (երեսուներկու միլիոն մեկ հարյուր երեսուներեք հազար երեք հարյուր երեսուներեք) ՀՀ դրամ
7.	Բարեգործություն ստացողը	Հիմնադրամի շահառուներ, սոցիալապես անապահով ընտանիքների անդամներ, միակողմանի և երկկողմանի ծնողազուրկ երեխաներ, հաշմանդամ երեխաներ
8.	Ծրագրի իրականացման տևողությունը	2020 թվականի հոկտեմբերի 2-ից մինչև 2020 թվականի նոյեմբերի 1-ը
9.	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	«Դիակոնիա» բարեգործական հիմնադրամին պատկանող ուսումնական մասնաշենքում 148.9 կՎտ հզորությամբ արևային ֆոտովոլտային կայանի տեղադրման և ցանկապատման և թվով 2 հատ տեսախցիկների տեղադրման աշխատանքների արժեքը կազմում է 32 133 333 (երեսուներկու միլիոն մեկ հարյուր երեսուներեք հազար երեք հարյուր երեսուներեք) ՀՀ դրամ. ժամկետը՝ 02.10.2020 թ. մինչև 01.11.2020 թ.:
10.	Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	«Դիակոնիա» բարեգործական հիմնադրամի և «Ֆրիներջի» ՍՊԸ-ի միջև կնքվել է աշխատանքների կատարման պայմանագիր, որի արժեքը կազմում է 32 133 333 (երեսուներկու միլիոն մեկ հարյուր երեսուներեք հազար երեք հարյուր երեսուներեք) ՀՀ դրամ՝ առանց ԱԱՀ-ի:
11.	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը	Կազմակերպական ծախսեր չեն նախատեսվում
12.	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների և այլ կազմակերպությունների հետ	Համագործակցություն չունենք
13.	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրություն	ՀՀ կառավարության 2003 թ. հունվարի 16-ի թիվ 66-Ն որոշմամբ հաստատված բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու և գրանցելու կարգի 25-րդ կետով սահմանված կարգով կներկայացվեն տեղեկություններ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԱՎԻՆՅԱՆ